Տեսանյութերի մրցույթ՝ քաղաքացիական հասարակությունը ԵԱՀԿ տարածքում

Ամսաթիվ՝ 24 օգոստոսի 2009թ.- 2 հոկտեմբերի 2009թ.

Նկարագրություն՝ Մրցույթը կընդգծի քաղաքացիական հասարակության գործունեության դրական օրինակները. մրցույթին կարող են մասնակցել ԵԱՀԿ 56 պետությունների 18-30 տարեկան բնակիչները: Հաղթողները կուղևորվեն Վիեննա մասնակցելու բեռլինյան պատի փլուզման 20-րդ տարելիցի կապակցությամբ նոյեմբերի 5-ից 6-ը ԵԱՀԿ-ում կայանալիք միջոցառումներին:

Մասնակցություն. քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները ԵԱՀԿ տարածքում

Բեռլինյան պատի և երկաթե վարագույրի փլուզման 20-րդ տարեդարձին նվիրված մրցույթը նախաձեռնվել և ֆինանսավորվել է ԵԱՀԿ-ում Գերմանիայի մշտական պատվիրակության կողմից՝ ԵԱՀԿ-ի Հունաստանի նախագահության աջակցությամբ:

1975թ. ԵԱՀԿ-ի որպես Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով (ԵԱՀԽ) ստեղծման օրից, Մասնակից պետությունները հայտարարեցին իրենց պարտավորվածությունը «խրախուսել և խթանել քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրագործումը, որոնք բխում են մարդու անկապտելի արժանապատվությունից»:

1989թ. հունվարին պետությունները հաստատեցին իրենց պարտավորությունը «հարգել իրենց քաղաքացիների՝ ակտիվորեն, անհատապես կամ մյուսների հետ համատեղ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանմանն ու պաշտպանությանը աջակցելու իրավունքը»:

Այդ տարին կրում էր ազատության, ժողովրդավարության և իրենց հասարակությունների զարգացմանը իրապես մասնակցության ուղին բացած Եվրոպայի քաղաքացիների համարձակության ու վճռականության դրոշմը:

Սառը պատերազմի ժամանակ Եվրոպան բաժանող երկաթե վարագույրի մի մասը՝ բեռլինյան պատը, տապալվեց նոյեմբերի 9-ին. Սառը պատերազմի ավարտը և նոր ամբողջական և ազատ Եվրոպայի ստեղծումը խորհրդանշող պատմական իրադարձություն, որը պահանջում էր նոր սկիզբ: Ըստ քաղաքագետ Վլադիմիր Տիսմանեանուի՝ «1989-1991-թվականների ճանապարհը կառուցված էր քիչ տեսանելի, երբեմն աննշմարելի, բայց խիստ կարևոր հեռահար աշխատանքներից, որ այժմ անվանում ենք քաղաքացիական հասարակություն»:

1989թ. պատմական իրադարձությունից 20 տարի հետո ԵԱՀԿ-ն շարունակում է կարևորել քաղաքացիական հասարակության դերը կայունության, անվտանգության և մարդու իրավունքների հանդեպ հարգանքի խթանման հարցերում: Տարեդարձը հիանալի հնարավորություն է անդրադառնալու քաղաքացիական հասարակության ձեռքբերումներին ԵԱՀԿ ամբողջ տարածքի անվտանգության երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդկային:

ԵԱՀԿ-ն հրավիրում է ԵԱՀԿ 56 Մասնակից պետությունների բնակիչներին՝ հատկապես ուսանողներին, լրագրողներին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին մասնակցել տեսանյութերի մրցույթին, որի նպատակն է **քաղաքացիական**

մասնակցության կարևորության գիտակցումը բարձրացնելն ու քաղաքացիական հասարակության գործունեության դրական օրինակներն ընդգծելը:

Հաղթողները կհրավիրվեն Վիեննա մասնակցելու բեռլինյան պատի փլուզման 20-րդ տարելիցի կապակցությամբ 2009թ. նոյեմբերի 5-ից 6-ը ԵԱՀԿ-ում կազմակերպված միջոցառումներին:
Դիմումների ընդունման վերջնաժամկետը հոկտեմբերի 2-ն է:

Մրցույթի կանոնները

Մրցույթին կարող են մասնակցել **ԵԱՀԿ 56 Մասնակից պետությունների 18-30 տարեկան բոլոր բնակիչները** մինչև **2009թ**. հոկտեմբերի 2-ը: Մասնավորապես խրախուսվում է ուսանողների, լրագրողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը մրցույթում:

Ներկայացված տեսանյութերը, որոնք կարող են լինել նաև ձայնային սլայդների ցուցադրման տեսքով, պետք է չգերազանցեն երեք րոպեն: Դրանք պետք է լինեն անգլերեն կամ ունենան անգլերեն ենթագրեր/subtitles: Մեկ անձը կարող է մրցույթի ներկայացնել միայն մեկ տեսանյութ:

Ներկայացվող նյութերը պետք է ունենան հետևյալ թեման «Մասնակցություն. ԵԱՀԿ տարածքում քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները» և ընդգծեն ԵԱՀԿ անվտանգության երեք ուղղություններով քաղաքացիական հասարակության գործունեության օրինակներ: Այն ներառում է քաղաքական, սոցիալական և կրթական նախաձեռնություններ ոչ պետական կազմակերպությունների կամ այլ խմբերի և անհատ քաղաքացիների կողմից:

Մասնակիցներին խորհուրդ է տրվում տեղադրել իրենց տեսանյութերը YouTube-ում: Դրա համար հարկավոր է հատուկ գրանցվել: Մանրամասն տեղեկությունների համար այցելեք http://www.googlw.com/support.youtube:

Տեղադրված տեսանյութի կայքի հասցեն՝ բովանդակության համառոտ նկարագրության հետ միասին, պետք է ներառվեն դիմումաձևի մեջ (տես կցված):

Լրացրած դիմումաձևերը պետք է ուղարկել takingpart-2009@osce.org էլ-փոստի հասցեին:

Եթե դուք չեք կարող ներկայացնել տեսանյութը YouTube-ով, դուք կարող եք ուղարկել այն USB կրիչով կամ ստանդարտ այլ կրիչով հետևյալ հասցեին՝

Taking part – contest
OSCE Press and Public Information Section
Wallnerstrasse 6
1010 Vienna, Austria

Ընդունման վերջնաժամկետը **2009թ հոկտեմբերի 2-ն է:** Հանձնվող տեսանյութերը և լրացված դիմումները պետք է ուղարկել մինչ այդ օրը:

Պահանջներին համապատասխանող բոլոր դիմումները կգնահատվեն միջազգային ժյուրիի կողմից, որոնց որոշումները վերջնական են ու պարտադիր բոլոր առումներով և ենթակա չեն բողոքարկման: Հանձված դիմումները կգնահատվեն համաձայն մրցույթի թեմայի պատշաճության և ԵԱՀԿ արժեքների, յուրօրինակության, ստեղծագործական մակարդակի, պատրաստման որակի և ուղերձի:

Եզրափակիչ փուլ հասած մասնակիցների տեսանյութերը կտեղադրվեն ԵԱՀԿ կայքէջում, YouTube-ում և Facebook-ի էջերում: Փոստով ուղարկված նյութերը կմուտքագրվեն ԵԱՀԿ-ի կողմից:

Հաղթողները կհայտարարվեն հոկտեմբերի կեսերին: **Հաղթողները կհրավիրվեն Վիեննա մասնակցելու բեռլինյան պատի փլուզման 20-րդ տարեդարձին և երկաթե վարագույրի բարձրացմանը նվիրված միջոցառումներին ԵԱՀԿ-ում նոյեմբերի 5-ին և 6-ին**, որտեղ հաղթող տեսանյութերը կցուցադրվեն հատուկ ցուցահանդեսում: Նրանք նաև ներկա կգտնվեն հանդիսավոր արարողությանը, որտեղ ելույթներով հանդես կգան Գերմանիայի արտաքին գործերի նախկին նախարար Հանս-Դիթրիխ Գենշերը, ԵԱՀԿ գործող նախագահ, Հունաստանի արտաքին գործերի նախարար Դորա Բակոյանին և Ավստրիայի արտաքին գործերի նախարար Մայքլ Սփինդելեգերը: Մրցանակը ներառում է հետադարձ տոմսը և մնալու ծախսերը:

Դիմումները չպետք է պարունակեն մյուսների իրավունքները ոտնահարող կամ խախտող նյութեր, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում գաղտնիության, հրապարակայնության կամ մտավոր սեփականության իրավունքներով, կամ որոնք պարունակում են հեղինակային կամ արտոնագրային իրավունքի խախտում: Հանձնվող տեսանյութը, չպետք է պարունակի անհամապատասխան, անպատշաճ, անպարկեշտ, ատելությամբ լի, զրպարտական նյութեր կամ խրախուսի որևէ բանի մոլեռանդություն, ռասայական խտրականություն, ատելություն կամ վնասի որևէ խմբի կամ անհատի, կամ խրախուսի ռասայի, սեռի, կրոնի, ազգության, հաշմանդամության , սեռական կողմնորոշման կամ տարիքի վրա հիմնված խտրականություն, կամ լինի անօրինական՝ խախտելով կամ հակասելով օրենքներին և կանոններին:

Եթե ֆիլմում նկարահանված անձինք չափահաս չեն համարվում իրենց բնակության երկրում կամ երկրում, որտեղ ֆիլմը նկարահանվել է, ապա պահանջվում է ծնողի կամ օրինական հոգաբարձուի ստորագրությունը: Թույլտվությունը պետք է հանձնել դիմումի հետ միասին:

Օդանավի տոմսը նշանակում է տոմս դեպի և հաղթողի բնակության վայրին մոտ օդանավակայանը: Հաղթողները պետք է ճամփորդեն կազմակերպչի կողմից նշված օրերին: Մրցանակի փոխանակում կամ փոխանցում չի թույլատրվի, բացառությամբ կազմակերպչի եզակի հայեցողությանը: Մրցանակները չեն կարող փոխանակվել գումարով:

Դիմելով մրցույթին՝ դուք համաձայնում եք հետևյալին.

- ես հաստատում եմ, որ ես ինքս եմ նկարահանել ներկայացվող տեսանյութը և որ ես հանձնվող տեսանյութի միակ սեփականատերն եմ
- այս տեսանյութը նկարահանվել է 2007թ. հետո ԵԱՀԿ 56 Մասնակից պետություններից մեկում
- ես հասկանում եմ, որ ԵԱՀԿ-ն կընդունի միայն այն տեսանյութերը, որոնք հանձնվել են ԵԱՀԿ Մասնակից պետությունների բնակիչների կողմից, որոնք 18-ից 30 տարեկան են
- ես ԵԱՀԿ պաշտոնյա չեմ
- ԵԱՀԿ-ն իրավունք է վերապահում ցուցադրել հանձնած նյութերը առանց աշխարհագրական կամ ժամանակային սահմանափակումների
- ես հասկանում եմ, որ եթե ես իմ նյութերը հանձնում եմ էլ-փոստի հասցեով, ես թուլտվություն եմ տալիս ԵԱՀԿ-ին տեղադրել այն ԵԱՀԿ կայքէջում, YouTube-ում, Facebook-ում և այլ էջերում:

- ես հասկանում եմ, որ հանձնաժողովը կընտրի այս մրցույթի հաղթողներին և նրա բոլոր որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն
- ես հասկանում եմ, որ իմ տեսանյութը չի ընդունվի առանց պատշաճ լրացրած դիմումաձևի
- ես հասկանում եմ, որ ԵԱՀԿ-ն իրավունք է ունի որակազրկել ցանկացած տեսանյութ, որը չի համապատասխանում դիմելու պահանջներին
- որքանով ես տեղյակ եմ ոչ մի այլ կողմ չի կարող պահանջել կամ օգտագործել որևէ իրավունք կամ որևէ առարկություն ունենալ հանձնվող տեսանյութի հետ կապված

Ոչ պատշաճ լրացրած դիմումաձևերը կորակազրկվեն

Մրցույթին կամ հանձման գործընթացին վերաբերող հարցերը կարող եք ուղարկել takingpart-2009@osce.org էլ-փոստի հասցեին կամ զանգահարել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ: